ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» հուլիսի 2011թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N3011-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 11-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի «Մի շարք առևտրային կազմակերպությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունները, դրանց կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N983-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N3011-Ա որոշմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N3011-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2011 թվականի ընկերությունում արտադրական և աշխատանքային փաստացի ծավալների կտրուկ նվազումը՝ ներկայացված որոշման նախագիծը նախատեսում է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կառուցվածքի և հաստիքացուցակի համապատասխանեցում փաստացի իրավիճակին:

Արտադրական և աշխատանքային ծավալի հետագա հնարավոր աճին համապատասխան ընկերությունում կավելացվեն պայմանագրային հիմունքներով աշխատողների թվաքանակը:

Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի 983-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտություն չի առաջանում փոփոխություններ կատարել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշման մեջ:

Երևանի քաղաքապետի 18.04.2011թ. N1367-Ա որոշմամբ հաստատված «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի 2011թ. տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվով նախագծանախահաշվային փաստաթղթերի իրացումից հասույթ է նախատեսված 333.3 մլն դրամ, վճարովի ծառայություններից (բազմացման աշխատանքներ)՝ 1.4 մլն դրամ, ընդամենը՝ 334.7 մլն դրամ, որը ԱԱՀ-ի հետ միասին կազմում է 401.64 մլն. դրամ:

2011թ. 1-ին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 102.7մլն դրամ, ԱԱՀ-ի հետ միասին՝ 123.2 մլն դրամ, կամ 1-ին կիսամյակի կատարողականը կազմել է տարեկան նախատեսվածի 30.68%-ը: 2011թ. 2-րդ կիսամյակում դեռևս աշխատանքների ծավալների աճի միտում չի սպասվում:

Ծախսային մասում աշխատավարձի ֆոնդ է նախատեսվել իրացումից ստացված հասույթի 65%-ը, կամ գումարային արտահայտությամբ՝ 217.5 մլն դրամ: Հաստիքային ցուցակով նախատեսված էր 110 միավոր: Մեկ հաստիքային միավորի միջին ամսական աշխատավարձը կազմել է 164.8 հազ. դրամ:

2011թ. 2-րդ կիսամյակում իրականում հնարավոր է ապահովել 1-ին կիսամյակի փաստացի կատարողականի չափով՝ 102.7 մլն դրամ: Աշխատավարձի ֆոնդը 65%-ով հաշված կկազմի 66.7 մլն դրամ:

Աշխատանքների ծավալների կտրուկ նվազեցման պատճառով 110 հաստիքային միավորի փոխարեն նախատեսվում է 55 հաստիքային միավոր: Մեկ միավորի միջին աշխատավարձը կկազմի մոտ 184.0 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N3011-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 11-ի N3011-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N3011-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 11-ի N3011-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ